



Ecoline  
International

## ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՈՒՄ (ՇՄՍԱԳ)

ՍԻՍԻԱՆ-ՔԱՋԱՐԱՆ  
(ՐՅՈՒՄԻՍ-ՅԱՐԱԿ ՄԻՋԱՆՑՔ)  
ՃԱՆԱՊԱՐՅԱՅԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ,  
ՀԱՅԱՍՏԱՆ



Աղբյուր՝ նկարները Սիսիան-Քաջարան առաջարկվող ճանապարհի 3D հոլովակից, Ճանապարհային  
դեպարտամենտ, 2022 [<https://www.youtube.com/watch?v=fu-dgAwjSsU>]

Օգոստոս 2024



Ecoline  
International

## ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ՇՄՍԱԳ)

ՍԻՍԻԱՆ-ՔԱՋԱՐԱՆ  
(ՐՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՄԻՋԱՆՑՔ)  
ՃԱՆԱԴԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ,  
ՀԱՅԱՍՏԱՆ

### Մշակված է



Ecoline  
International



SE SOLUTIONS  
Advancing Environmental Sustainability



ATMS Solutions

Եկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ  
(Սոֆիա, Բուլղարիա)

ՍԻ Ի Սոլյուշնս ՍՊԸ (ՀԱՀ)

Տնօրեն. Շոն Օ Բեյրն  
Հեռ. +27 (0)12 643 0190  
+27 (0)82 903 9751  
Էլ.փոստ.  
[robeirne@tiscali.co.za](mailto:robeirne@tiscali.co.za)

ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս ՍՊԸ  
(Երևան, Հայաստան)

Տնօրեն. Արտակ Տեր-Թորոսյան  
Հեռ. +37491 497128  
+37499 109495  
Էլ.փոստ.  
[artak.ter-torosyan@atms.am](mailto:artak.ter-torosyan@atms.am)



Տնօրեն. Սայա Կաչեչիլաձե-  
Բոժեսկո  
Հեռ. +38095 11 00 727 / +359  
876 63 0522  
Էլ.փոստ.  
[mgachechiladze@ecoline-int.org](mailto:mgachechiladze@ecoline-int.org)

### Մշակված է

Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և  
ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային  
դեպարտամենտ» հիմնադրամի համար

© Եկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ, 2024

Բոլոր իրավունքները պահպանված են:  
Սույն փաստաթղթի ամբողջական կամ մասնակի օգտագործումը  
կարող է կատարվել միայն հղում անելով սկզբնաղբյուրին:



**ՓԱՏԱԴՐՔԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ**

Տար- բերակ	Մշակված է	Ստուգված է	Հրապարակված է	Հրապարակման ամսաթիվը	Նկարագիրը
1	ՇՄՍԱԳ խորհրդատուի փորձագիտա- կան խումբ (թվարկված ՇՄՍԱԳ Հատոր 1)	Մայա Գաչեչիլադե- Բոժեսկու Շոն Օ Բեյոն	Մայա Գաչեչիլադե- Բոժեսկու (Եկոլայն հնթերնեյշնլ ՍՊԸ)	14.06.2023	Վարկատուների և պատվիրատուի և գնման տարբերակ
2				20.07.2023	Վարկատուների և պատվիրատուի հաստատման համար տարբերակ, հայերեն թարգմանության համար
3				06.02.2024	Վերջնական հաշվետվություն՝ վերանայված հրապարակման փուլից հետո
4				12.08.2024	Վերանայված տարբերակ ԱԶԲ-ի հրապարակման համար

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՈՒՄԸ**

Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատումը (ՇՄՍԱԳ) հիմնված է կանխատեսումների վրա, քանի որ այն ավարտվում է նախքան գնահատման ենթակա հանդիսացող ծրագրի իրականացումը: Տեղեկատվությունը, որի վրա հիմնված է գնահատումը, ստացվում է բազմաթիվ աղբյուրներից, ներառյալ տեխնիկատնտեսական հիմնավորումը, մանրամասն նախագծային փաստաթուղթը, ուսումնասիրությունների հաշվետվությունները, որոնք իրականացվել են տեխնիկատնտեսական հիմնավորման շրջանակներում, հանդիպումների գրառումները, այլ հրապարակումները, տարբեր տվյալների բազաները, ինչպես նաև ՇՄՍԱԳ խմբի կողմից հավաքագրված նյութերը: Չափազանց դժվար է հաստատել այն տեղեկատվությունը, որն անտրամաբանական է: Սույն փաստաթղթի մշակման ընթացքում մեծ աշխատանք է կատարվել ապահովելու համար, որ առկա բոլոր տեղեկությունները ճշգրտորեն վերարտադրվեն ՇՄՍԱԳ-ում: Եթե սույն փաստաթղթում առկա է տեղեկատվություն, որը սխալ է, խնդրում ենք դրա վերաբերյալ մեկնաբանություններ կատարվեն, որի հիման վրա կթարմացվի ՇՄՍԱԳ-ը: Մենք պատասխանատվություն չենք կրում այն տեղեկատվության համար, որը մենք բարեխղճորեն ընդունել և օգտագործել ենք՝ չիմանալով, որ այդ թերի կամ սխալ է: Ցուրաքանչյուր դեպքում, ով վերարտադրում է այս ՇՄՍԱԳ-ում առկա տեղեկատվությունը, դա անում է բացառապես իր ռիսկով:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԶԲ	Ասիական Չարգացման Բանկ
ԿՄՊ	Կենսաբազմազանության Միջոցառումների Պլան
ՄԺ	Մշակութային Ժառանգություն
ԲԱՍ	Բնապահպանական և Սոցիալական
ՎԶԵԲ	Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկ
ԵՆԲ	Եվրոպական Ներդրումային Բանկ
ԲՍՄՊ	Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլան
ՇՄՍԱԳ	Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցություն Գնահատում
ԲՍԿՊ	Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան
ԶԳ	Զերմոցային Գազեր
ԻԿՕՄՕՍ (ICOMOS)	Հուշարձանների և Տեսարժան Վայրերի Միջազգային Խորհուրդ
ԿԹՏ	Կարևոր Թռչնադիտական Տարածք
ԿԿՏ	Կարևոր Կենսաբազմազանության Տարածք
ՇՄ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՀՀԾՄ	Հյուսիս-Հարավ Ճանապարհային Միջանցք
ՈՏԱ	Ոչ-Տեխնիկական Ամփոփագիր
ՃԴ	"Ճանապարհային Դեպարտամենտ" Հիմնադրամ (Պատվիրատու)
ՏՇ	Տարաբնակեցման Շրջանակ
ՇՆՊ	Շահառուների Ներգրավվածության Պլան
ՎԲՀ (WWF)	Վայրի Բնության Հիմնադրամ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան ..... 6

1 Ներածություն ..... 7

2 Տվյալների հավաքագրման մեթոդներ եվ իրականացված ուսումնասիրությունների ամփոփում ..... 7

3 Ազդեցությունների վերլուծության, մեղմացման եվ կառավարման մոտեցումը ..... 10

4 Ծրագրի բնապահպանական եվ սոցիալական հնարավոր ազդեցությունների / ռիսկերի ամփոփումը ..... 10

5 Գնահատման եզրակացությունները եվ առաջարկությունները ..... 19

6 Մշտադիտարկման գործողություններ..... 20

7 Շահառուների ներգրավվածություն եվ բողոքարկման մեխանիզմ ..... 20

### ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Բացասական ազդեցության նշանակելիության գնահատականները ..... 10

Աղյուսակ 2. Դրական ազդեցության նշանակելիության գնահատականները ..... 11

Աղյուսակ 3. Շինարարական և շահագործման փուլերում ազդեցությունների գնահատման ամփոփումը ..... 11

Աղյուսակ 4. Գումարային ազդեցության գնահատման ամփոփումը ..... 18

Աղյուսակ 5. ՃԴ-ի կոնտակտային տվյալներ, որոնցով կարելի է ներկայացնել Ծրագրին առնչվող հարցումներ և բողոքներ ..... 21

## ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը ամփոփում է Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի գրոյից կառուցվող Սիսիան-Քաջարան ճանապարհային հատվածի (Ծրագիր) Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) **Եզրակացությունները և առաջարկությունները**: Այն կազմում է Ծրագրի ՇՄԱԳ-ի **Հատոր 7-ը**:

ՇՄԱԳ հաշվետվությունը բաղկացած է համապատասխան հավելվածներով հետևյալ 7 հատորներից՝

- Հատոր 1 - Ծրագրի սահմանումը, ներառյալ Ծրագրի ներկայացումը, ենթատեքստը և հիմնավորումը, Ծրագրի նկարագիրը, այլընտրանքները, իրավական շրջանակը և ՇՄԱԳ մեթոդակարգը,
- Հատոր 2 - Կենսաբազմազանությունը, ներառյալ ելակետային վիճակի վերլուծությունը, ռիսկերը/ազդեցությունների գնահատումը և մեղմացումը,
- Հատոր 3 - Ֆիզիկական միջավայրը, ներառյալ օդի որակի ու կլիմայի, աղմուկի ու թրթռման, լաղնշաֆտի և այլնի ելակետային իրավիճակը, ռիսկերը/ազդեցությունների գնահատումը և մեղմացումը,
- Հատոր 4 - Սոցիալական միջավայրը, ներառյալ սոցիալ-տնտեսական, գենդերային և պատմամշակութային ելակետային իրավիճակը, ռիսկերը/ազդեցությունների գնահատումը և մեղմացումը,
- Հատոր 5 - Գումարային ազդեցության գնահատումը,
- Հատոր 6 - Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանը (ԲՍԿՊ), և
- **Հատոր 7 - Եզրակացությունները և առաջարկությունները:**

ՇՄԱԳ-ը հրապարակվել է 120 օրվա ընթացքում՝ միջազգային վարկատուների պահանջներին համապատասխան (Հուլիսի 21-ից մինչև Դեկտեմբերի 1-ը 2023թ): Ի լրումն ՇՄԱԳ հաշվետվության, հրապարակման փաթեթը ներառում է՝

- Ոչ Տեխնիկական Ամփոփագիր (ՈՏԱ), որը ՇՄԱԳ-ի արդյունքները ոչ տեխնիկական լեզվով հակիրճ և համապարփակ ներկայացնող փաստաթուղթ է,
- Շահառուների Ներգրավման Պլան (ՇՆՊ), որն ուղղորդում է տեղեկատվության հրապարակումը և Ծրագրի շահագրգիռ կողմերի հետ բովանդակալից ներգրավվածությունը, ինչպես նաև բողոքարկման մեխանիզմը,
- Տարաբնակեցման Շրջանակ (ՏՇ), որն ուղղորդում է Ծրագրի հետևանքով ֆիզիկական և տնտեսական տեղաշարժի, հողի ձեռքբերման, փոխհատուցումների և ապրուստի միջոցների վերականգնման հետ կապված հարցերը,
- Կենսաբազմազանության Միջոցառումների Պլան (ԿՄՊ), որը հստակեցնում է այն գործողությունները, որոնք կարող են օգնել ապահովել հատուկ պահպանման արժեք համարվող պոտենցիալ ազդեցության ենթարկված կենսամիջավայրերի և տեսակների պահպանումը կամ բարելավումը,
- Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլան (ԲՍՄՊ), որը պարունակում է Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գործողություններ՝ միջազգային վարկատուների պահանջներին համապատասխան:

Հրապարակմանը հաջորդող ՇՄԱԳ հրապարակման և խորհրդակցությունների հաշվետվությունը մշակվել է ամփոփելու և փաստաթղթավորելու համար հրապարակման փուլում շահագրգիռ կողմերից և նրանց ներգրավման գործողություններից ստացված արձագանքը:

ՇՄԱԳ փաթեթը վերանայվել է հաշվի առնելով ՇՄԱԳ-ի հրապարակման ընթացքում հավաքագրված շահագրգիռ կողմերի արձագանքը և վերահրապարակվել է ՇՄԱԳ հրապարակման և խորհրդակցությունների հաշվետվության հետ միասին, Ծրագրի

կենսափուլերի համար՝ տեղադրվելով ՀՀ ճանապարհային Դեպարտամենտի (ՃԴ) և Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկի (ՎԵԲ) կայքերում՝ 2024 թվականի ապրիլին<sup>1</sup>:

Ծրագրի պլանավորման ընթացքում որոշվել է Սիսիան-Քաջարան ճանապարհը կառուցման աշխատանքները բաժանել երեք շինարարական փաթեթների<sup>2</sup>.

- Լոտ 1 - Հյուսիսային հատված՝ 27.1 կմ երկարությամբ (0+000 կմ-ից մինչև 27+104 կմ),
- Լոտ 2 - Բարգուշատի թունել՝ 8.64 կմ երկարությամբ (27+104 կմ-ից մինչև 35+770 կմ), և
- Լոտ 3 - Հարավային հատված՝ 24.2 կմ երկարությամբ (35+770 կմ-ից մինչև 60+022 կմ):

Անիական Չարգացման Բանկը (ԱՉԲ) դիտարկում է Լոտ 1-ի՝ Հյուսիսային ճանապարհահատվածի կառուցման ֆինանսավորումը Եվրոպական Ներդրումային Բանկի (ԵՆԲ) համաֆինանսավորմամբ: Լոտ 3-ի Հարավային ճանապարհահատվածը նախատեսում է ֆինանսավորել ՎԵԲ-ը՝ ԵՆԲ համաֆինանսավորմամբ: Լոտ 2-ը՝ Բարգուշատի թունելը նախատեսում է ֆինանսավորել ՀՀ կառավարությունը այլ միջազգային դոնորների հետ համատեղ:

Հետևելով ԱՉԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագրի պահանջներին՝ Ա կատեգորիայի բնապահպանական ծրագրերի համար, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունների նախագծերը, ներառյալ շրջակա միջավայրի կառավարման պլանները, պետք է հրապարակվեն ԱՉԲ-ի և կառավարության կողմից նվազագույնը 120 օր առաջ մինչև ԱՉԲ-ի խորհրդի նիստը: Հետևաբար, ԱՉԲ-ն նախաձեռնել է ՇՄԱԳ փաթեթի 120-օրյա հրապարակումը, ներառյալ սույն Հատոր 7-ը:

## 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս հատորն ամփոփում է ՇՄԱԳ-ի ընթացքում իրականացված աշխատանքները և ներկայացնում է ՇՄԱԳ-ի հիմնական բացահայտումները՝ Ծրագրի Բնապահպանական և Սոցիալական (ԲևՍ) ազդեցությունների / ռիսկերի և օգուտների, մոնիտորինգի և կառավարման մոտեցման և շահագրգիռ կողմերի ներգրավվածության առումով:

## 2 ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ծրագրի նկարագրությունը մշակելու համար ՇՄԱԳ թիմը վերանայել է առկա նախագծային փաստաթղթերը և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կյուբերը, որոնք տրամադրվել են "Ճանապարհային դեպարտամենտ" հիմնադրամի (ՃԴ) կողմից, ինչպես նաև անցկացրել է բազմաթիվ խորհրդակցություններ ՃԴ-ի, տեխնիկական խորհրդատուի (Bernard Gruppe) և Ծրագրի վարկատուների պատասխանատու ներկայացուցիչների հետ: Տեխնիկական խորհրդատուի մանրամասն նախագծման և

<sup>1</sup>Հղումը ՃԴ-ի կայքին՝ [https://armroad.am/en/news/inner/News\\_04.04.2024\\_4](https://armroad.am/en/news/inner/News_04.04.2024_4), հղում ՎԵԲ-ի կայքին՝ <https://www.ebrd.com/work-with-us/projects/esia/northsouth-corridor-sisiankajaran-road-project.html>

<sup>2</sup>Նշված երկարությունները նախնական են: Հատվածների վերջնական երկարությունները կորոշվեն մանրամասն նախագծման արդյունքում: Այնպես ՎԵԲ-ը, որ քանի դեռ Բարգուշատի թունելի երկարությունը մտում է անփոփոխ, պորտալների մոտ դրան կավելացվի մի քանի կիլոմետր՝ այդպիսով նվազեցնելով հյուսիսային և հարավային հատվածների երկարությունները:

կլիմայի հարմարվողականության վերաբերյալ հաշվետվությունները հանդիսացել են տեղեկատվության արժեքավոր աղբյուրներ:

Բնապահպանական, կենսաբազմազանության, սոցիալ-տնտեսական, գենդերային և մշակութային ժառանգության ելակետային տվյալների հավաքագրման և վերլուծության մեթոդաբանությունը հանդիսանում է. ա) արխիվացված և բաց աղբյուրներից տվյալների (օրինակ՝ պետական վիճակագրական և շրջակա միջավայրի մշտադիտարկման տվյալներ, հնագիտական ուսումնասիրությունների հաշվետվություններ և կենսաբազմազանության հետազոտությունների հրապարակումներ) լայնածավալ գրասենյակային աշխատանքների և բ) դաշտային հետազոտությունների, հարցումների և չափումների, ինչպես նաև տեղի բնակիչների, իրավասու մարմինների, տեղական, քաղաքային և մարզային վարչակազմերի և կոմունալ ծառայությունների օպերատորների ներկայացուցիչների հետ հարցազրույցների և քննարկումների համակցում: Ազդեցության գնահատման ընթացքում օգտագործվել են ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդական տվյալներ: ՇՄԱԳ-ի համար ԲևՍ ելակետային տեղեկատվության հավաքագրման նպատակով ձեռնարկված դաշտային ուսումնասիրությունների ամփոփագիրը ներկայացված է ստորև: ՇՄԱԳ-ի ընթացքում շահագրգիռ կողմերի հետ յուրաքանչյուր միջոցառմանը նախորդել է Ծրագրի և ուսումնասիրության/հանդիպման նպատակների մասին տեղեկատվության տրամադրումը:

**Շրջակա միջավայրի վերաբերյալ ելակետային ուսումնասիրություններ և հետազոտություններ (մանրամասների համար տես Հատոր 3)**

Ծրագրի ազդեցության գոտում ֆիզիկական միջավայրի ելակետային պայմանների վերաբերյալ տվյալներ հավաքագրելու համար իրականացվել են օդի, ջրի և հողի նմուշառումներ (հետագա անալիզներ իրանացնելու նպատակով) և աղմուկի ու թրթռումների մակարդակների չափումներ առաջարկվող ճանապարհի ծրագծի 26 և Սիսիան-Շենաթաղ ու Զիրս-Զաջարան առկա ճանապարհների երկայնքով 8 վայրերում: Նմուշառման/չափման կետերը տեղակայված են եղել ընտրված զգայուն կլանիչների մոտ (բնակելի տներ, հիվանդանոցներ, դպրոցներ, եկեղեցիներ, խանութներ և այլն):

**Կենսաբազմազանության դաշտային հետազոտություններ (մանրամասների համար տես Հատոր 2)**

Կենսաբազմազանությունը ներառել է տարբեր հոսքերի՝ բուսական աշխարհի և բնակավայրերի, ցամաքային կաթնասունների և չղջիկների, թռչունների, սողունների և երկկենցաղների, ձկների և թիթեռների հետազոտություններ ապագա շինհրապարակների տարածքում և շրջակայքում: Դաշտային աշխատանքներն իրականացվել են չորս սեզոնների ընթացքում՝ 2021 և 2022 թվականներին, յուրաքանչյուր սեզոնի 16-17 օրվա ընթացքում՝ լուսաբանելու տարբեր թիրախային տեսակների էկոլոգիական ցիկլերի բազմազանությունը (բուծում, ձմեռում, միգրացիա): Տվյալների հավաքագրման մեթոդները ներառում էին, ի թիվս այլոց, տեսախցիկի նկարահանումը Չանգեզուր արգելավայրի և WWF Հայաստանի ներկայացուցիչների հետ որոշված առանցքային վայրերում: Տեսախցիկների թակարդները մնացել են տեղում մի քանի սեզոնների ընթացքում և ընդհանուր առմամբ ներկայացնում են 1089 տեսախցիկ-օր:

Բացի այդ, անցկացվել են ավելի քան 20 թիրախային անհատական և խմբային խորհրդակցություններ են անցկացվել կենսաբազմազանության փորձագետների, Շրջակա միջավայրի նախարարության (ՇՆ) և պահպանվող տարածքների անձնակազմի և ՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

**Սոցիալ-տնտեսական ուսումնասիրություններ և դաշտային հետազոտություններ (մանրամասների համար տես Հատոր 4-ի Հավելված 1-ը)**

Սոցիալական փորձագետները կիրառել են տվյալների հավաքագրման որակական մեթոդներ (հարցազրույցներ, ֆոկլուս խմբեր և խորհրդատվություններ, դիտորդական զբոսանքներ և ֆոտո-գրանցումներ), որոնք թույլ են տվել հավաքել ինչպես որակական, այնպես էլ քանակական տեղեկատվություն: Ուսումնասիրման ծրագիրը ներառել է.



- Մեկնարկային այցելություններ 2021 թվականի ապրիլին և 2021 թվականի դեկտեմբերին՝ ներառյալ հարցազրույցներ և/կամ խորհրդակցություններ մարզային, համայնքային և տեղական ինքնակառավարման մարմինների 35 հիմնական իրազեկողների հետ,
- Լայնածավալ դաշտային ուսումնասիրություններ Ծրագրի ազդակիր գյուղերում և համայնքներում 2022թ.-ի մայիս-հունիս ամիսներին, որոնք ներառում էին 122 խորացված հարցազրույց, 7 ֆոկլուս խմբեր և 5 խորհրդակցություններ, որոնց մասնակցել են 180 հոգի (որոնցից 80-ը կին),
- Լրացուցիչ խորհրդակցություններ տեղական իշխանությունների հետ 2022 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներին՝ հավաքագրված տեղեկատվությունը խաչաձև ստուգելու, Սիսիան և Քաջարան համայնքներում ընթացող և նախատեսվող զարգացումների վերաբերյալ թարմացումներ ստանալու և ազդեցության գնահատման որոշ ենթադրություններ ստուգելու համար:

Ավելի ուշ՝ 2022 թվականին, մարդահամարի և գույքագրման ուսումնասիրություններին զուգահեռ անցկացվեց տնային տնտեսությունների հետազոտություն՝ Ծրագրի Տարա-բնակեցման Պլանի (ՏՊ) համար տեղեկատվություն հավաքելու համար:

**Մշակութային ժառանգության ուսումնասիրություններ և դաշտային հետազոտություններ**

Նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ տվյալները հավաքագրվել են համակարգված դաշտային հետազոտության ընթացքում՝ առաջարկվող ճանապարհի երկու կողմերում՝ 500 մ ուսումնասիրման գոտիում: Դաշտային աշխատանքների մեթոդները ներառում էին հնագիտական վայրերի / արժեքների գրանցումը, լուսանկարահանումը, քարտեզագրումը և մակերևութային գտածոների հավաքագրումը: Անօդաչու թռչող սարքերն օգտագործվել են այն վայրերում, որոնք հասանելի չեն եղել դաշտային հետազոտության ընթացքում:

Ինչ վերաբերում է ոչ նյութական մշակութային ժառանգությանը, ապա տեղանքները կամ վայրերը, որոնք սրբավայր են համարվում տեղի բնակիչների համար, կապված են տեղական փառատոների, տոնակատարությունների, մշակութային կարևոր իրադարձությունների կամ ավանդույթների հետ, նույնականացվել են դաշտային հետազոտությունների ընթացքում, իսկ ազդակիր գյուղերում անցկացվել են համապատասխան հարցազրույցներ/խորհրդակցություններ:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ԻԿՕՄՕՍ-Հայաստանի<sup>3</sup>, Սիսիանի պատմության թանգարանի և տեղի բնակիչների՝ մշակութային ժառանգության տեղեկատվության կրողների հետ խորհրդակցությունները հիմք են հանդիսացել ելակետային վերլուծության և ազդեցության գնահատման համար:

**Գումարային ազդեցության գնահատում**

Ազդեցության գումարային գնահատման պահանջվել են լրացուցիչ ջանքեր՝ Ծրագրի տարածաշրջանում անցյալում, ներկայում և ապագայում այն նախատեսվող գործունեությունների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու համար, որոնք կարող են փոխազդել Ծրագրի հետ: Այդ տեղեկատվությունը հավաքագրվել է ՇՄ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հասանելի տվյալների բազայից և Ծրագրի ազդակիր բնակավայրերի իշխանությունների ու համապատասխան նախաձեռնողների / նախագծողների հետ խորհրդակցությունների միջոցով:

<sup>3</sup> Հուշարձանների և Տեսարժան Վայրերի Միջազգային Խորհուրդի Հայաստանյան ներկայացուցիչներ և ՀԿ-եր

### 3 ԱՂԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐՈՒԾՈՒԹՅԱՆ, ՄԵՂԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ

Ազդեցությունների նշանակելիության գնահատման մեթոդաբանությունը բերված է ՇՄԱԳ-ի Հատոր 1-ի Բաժին 5.5-ում: Ազդեցության նշանակելիությունը որոշվում է որպես ֆունկցիա Ծրագրի ազդեցության նկատմամբ կլանիչի զգայունության և ազդեցության ուժգնության (շրջակա կամ սոցիալական միջավայրի փոփոխության աստիճանը), որը որոշվում է իր տարածական չափով, տեղի ունենալու պոտենցիալով, տևողությամբ և սպասվող փոփոխությունների դարձելիությամբ: Ազդեցության նշանակելիության որոշումը հիմնված է փաստարկների, սահմանաքանակների (առկայության դեպքում), մասնագիտական դատողությունների և շահագրգիռ կողմերի տեսակետների (եթե առկա է) վրա: ՇՄԱԳ ընթացքում օգտագործվող հիմնական նշանակելիության կատեգորիաներն են՝ բարձր, չափավոր, փոքր և աննշան, նշանակելիության գնահատականները տրվում են ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունների համար:

Այն դեպքերում, երբ Ծրագիրը հավանաբար կհանգեցնի անընդունելի բացասական բնապահպանական և/կամ սոցիալական ազդեցությունների, առաջարկվում են մեղմացնող միջոցառումներ՝ խուսափելու կամ սահմանափակելու այդ ազդեցությունները: Դրական ազդեցությունների համար առաջարկվում են նաև լրացուցիչ միջոցառումներ՝ օգուտները մեծացնելու կամ դրանք ավելի կայուն դարձնելու համար: Այն դեպքերում, երբ կանխատեսվում է, որ կպահանջվեն մեղմացնող միջոցառումներ, ազդեցության նշանակելիությունը գնահատվում է առաջարկվող մեղմացման գործողությունից առաջ և հետո՝ ցույց տալու համար մնացորդային ազդեցության մեծությունը իրականացումից հետո: Մեղմացնող և բարելավման միջոցառումները միավորված են Ծրագրի Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանում (ԲՍԿՊ) և ընտրված Շին. կապալառուն կիրականացնի ԲՍԿՊ-ը և հետագայում կմշակի կոնկրետ և թեմատիկ շինարարության կառավարման պլաններ՝ հիմնված ԲՍԿՊ-ի վրա՝ արդյունավետ կառավարելու շինարարական ռիսկերն ու ազդեցությունները: Բացի այդ, քանի որ Ծրագրի որոշ բաղադրիչներ, ինչպիսիք են հողային հանույթի տեղադրման վայրերը, շինարարական ճամբարները, էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման աղբյուրները, դեռևս ամբողջությամբ սահմանված չեն, լրացուցիչ գործողություններ են ներառվել Ծրագրի Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլանում (ԲՍՄՊ)՝ Վարկատուների պահանջներին լիարժեք համապատասխանելու նպատակով:

### 4 ԾՐԱԳՐԻ ԲՆԱՊԱՀԱՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՂԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ / ՌԻՍԿԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

ԲևՍ ռիսկերի և ազդեցությունների ամփոփագիրը և դրանց նշանակելիության գնահատականները նախքան մեղմացման կամ բարելավման միջոցառումները և դրանցից հետո (այսինքն՝ մնացորդային ազդեցություններ) ներկայացված են ստորև, որին հաջորդում է գումարային<sup>4</sup> ազդեցությունների ամփոփումը:

Աղյուսակ 1. Բացասական ազդեցության նշանակելիության գնահատականները

Ազդեցության ուժգնությունը	Կլանիչի զգայունությունը / մեծությունը			
	Բարձր	Միջին	Ցածր	Շատ ցածր
Բարձր	Բարձր	Բարձր	Չափավոր	Ցածր
Միջին	Բարձր	Չափավոր	Ցածր	Ցածր
Ցածր	Չափավոր	Չափավոր	Ցածր	Անտեսվող
Անտեսվող	Չափավոր	Ցածր	Անտեսվող	Անտեսվող

<sup>4</sup> Cumulative impacts are E&S impacts that are the result of activities for implementation of the respective project in combination with other similar past, present or future activities within the observed area. Cumulative impacts are assigned with the same significance grades (major, moderate, minor, and negligible) as the Project's impacts/risks.

**Աղյուսակ 2. Դրական ազդեցության նշանակելիության գնահատականները**

Ազդեցության ուժգնությունը	Կլանիչի զգայունությունը / մեծությունը			
	Բարձր	Միջին	Ցածր	Շատ ցածր
Բարձր	Բարձր	Բարձր	Չափավոր	Ցածր
Միջին	Բարձր	Չափավոր	Ցածր	Ցածր
Ցածր	Չափավոր	Չափավոր	Ցածր	Անտեսվող
Անտեսվող	Չափավոր	Ցածր	Անտեսվող	Անտեսվող

**Աղյուսակ 3. Շինարարական և շահագործման փուլերում ազդեցությունների գնահատման ամփոփումը<sup>5</sup>**

Հարաչափը	Հնարավոր ազդեցությունը	Նշանակելիության գնահատականը (մինչ մեղմացումը / բարելավումը)	Մնացորդային նշանակելիության գնահատականը (մեղմացումից / բարելավումից հետո)
<b>Ազդեցություններ ֆիզիկական միջավայրի վրա (Շինարարության փուլ)</b>			
Օդի որակ	Փոշու արտանետումներ	Բացասական չափավոր	Բացասական ցածր
	Զերմոցային գազերի (ԶԳ) արտանետումներ	Բացասական ցածր	Բացասական ցածր (պետք է հաստատվի) <sup>6</sup>
Աղմուկ և թրթռում	Աղմուկ բնակավայրում	Բացասական բարձր	Բացասական չափավոր
	Թրթռման ազդեցությունը մշակութային ժառանգության կառույցների վրա	Բացասական բարձր	Բացասական ցածր
Մակերևութային ջրային ռեսուրսներ	Ազդեցությունը մակերևութային ջրերի հոսքերի հիդրոլոգիական ռեժիմի վրա	Բացասական չափավոր	Բացասական անտեսվող
	Ազդեցությունը ջրի որակի վրա՝ պայմանավորված հողի էրոզիայի ինտենսիվության, փոշու և գազային արտանետումների, վտանգավոր նյութերի և թունելի կեղտաջրերի արտահոսքերի	Բացասական չափավոր	Բացասական անտեսվող
Ստորգետնյա ջրեր	Ազդեցություններ ստորգետնյա ջրերի որակի վրա՝ պայմանավորված վտանգավոր նյութերի արտահոսքի հետ	Բացասական չափավոր	Բացասական չափավոր
Թափոններ	Ազդեցություններ կենսաբազմազանության, ջրային և հողային ռեսուրսների վրա՝ կախված հողային հանույթի տեղադրման հետ	Բացասական չափավոր	Բացասական ցածր
	Ազդեցություններ կենսաբազմազանության, ջրի և հողի որակի վրա կախված	Բացասական ցածր	Բացասական ցածր

<sup>5</sup> Այնտեղ, որտեղ կան բազմաթիվ գնահատականներ տարբեր ազդեցության չափերի վերաբերյալ, օգտագործվում է ամենաբարձր նշանակելիության գնահատման գույնը (եթե այլ բան նշված չէ).

<sup>6</sup> 2023 թվականի ամառվա դրությամբ լրացուցիչ երթևեկության ուսումնասիրությունը դեռևս ընթացքում է

Հարաչափը	Հնարավոր ազդեցությունը	Նշանակելիության գնահատականը (մինչ մեղմացումը / բարելավումը)	Մնացորդային նշանակելիության գնահատականը (մեղմացումից / բարելավումից հետո)
	Կենցաղային աղբի տեղադրման հետ		
<b>Ազդեցություններ ֆիզիկական միջավայրի վրա (Շահագործման փուլ)</b>			
Օդի որակ	NO <sub>2</sub> արտանետումների ազդեցություններ	Բացասական չափավոր	Բացասական ցածր
	ՋԳ արտանետումներ	Բացասական չափավոր	Բացասական չափավոր (պետք է հաստատվի) <sup>7</sup>
Աղմուկ և թրթռում	Աղմուկ բնակավայրում	Բացասական բարձր	Բացասական չափավոր
Գեոլոգիան	Գեոլոգիաների ազդեցությունը ճանապարհների և ճանապարհներ օգտագործողների վրա	Բացասական բարձր	Բացասական ցածր
Մակերևութային ջրային ռեսուրսներ	Ազդեցություն ջրի որակի վրա աղտոտված անձրևաջրերով և թափոնների պատճառով	Բացասական ցածր	Բացասական անտեսվող
Ստորգետնյա ջրեր	Ազդեցություն ստորգետնյա ջրերի որակի վրա՝ վտանգավոր կյութերի արտահոսքերի հետևանքով	Բացասական չափավոր	Բացասական ցածր
Թափոններ	Թափոնների ազդեցությունը կենսաբազմազանության, ջրի և հողի որակի վրա	Բացասական ցածր	Բացասական անտեսվող
Լանդշաֆտ և տեսողական գրավչություն	Մշակութային ժառանգության ռեսուրսների լանդշաֆտի և համատեքստի մշտական փոփոխություններ	Բացասական չափավոր	Բացասական չափավոր
	Մշտական փոփոխություններ Որոտնավանքից տեսարանի վրա	Բացասական բարձր	Բացասական չափավոր
<b>Ազդեցություններ կենսաբազմազանության վրա (Շինարարության փուլ)</b>			
Կենսաբազմազանություն	Ազդեցություններ կենսաբազմազանության առաջնահերթ առանձնահատկությունների և տեսակների ու բնակավայրերի վրա, որոնք առաջացնում են կրիտիկական կենսամիջավայր	Բացասական բարձր	Բացասական չափավոր Փոխհատուցումից հետո՝ չկա զուտ կորուստ / զուտ շահույթ
	Ազդեցություններ պահպանվող, Emerald ցանցի և կենսաբազմազանության այլ կարևոր տարածքների վրա	Բացասական բարձր	Բացասական ցածր

<sup>7</sup> 2023 թվականի ամառվա դրությամբ լրացուցիչ երթևեկության ուսումնասիրությունը դեռևս ընթացքում է

Հարաչափը	Հնարավոր ազդեցությունը	Նշանակելիության գնահատականը (մինչ մեղմացումը / բարելավումը)	Մնացորդային նշանակելիության գնահատականը (մեղմացումից / բարելավումից հետո)
<b>Ազդեցություններ կենսաբազմազանության վրա (Շահագործման փուլ)</b>			
Կենսաբազմազանություն	Ազդեցություններ կենսաբազմազանության առաջնահերթ առանձնահատկությունների և տեսակների ու բնակավայրերի վրա, որոնք առաջացնում են կրիտիկական կենսամիջավայր	Բացասական բարձր	Բացասական փոքր Փոխհատուցումից հետո՝ չկա զուտ կորուստ / զուտ շահույթ
	Ազդեցություններ Էկոհամակարգերի ծառայությունների վրա	Բացասական փոքրից չափավոր	Բացասական փոքրից չափավոր
	Ազդեցություններ պահպանվող, Emerald ցանցի և կենսաբազմազանության այլ Կարևոր Կենսաբազմազանության Տարածքների (ԿԿՏ) / Կարևոր Թռչնադիտական Տարածքների (ԿԹՏ) վրա	Բացասական չափավոր	Բացասական ցածր
<b>Սոցիալական ազդեցություններ (Շինարարության փուլ)</b>			
Տնտեսություն	Ազդեցություններ Ծրագրին առնչվող ապրանքների և ծառայությունների գնումների վրա	Դրական չափավոր (համայնքի մակարդակ)	Դրական բարձր (համայնքի մակարդակ)
		Դրական ցածր (տարածաշրջանային մակարդակ)	Դրական չափավոր (տարածաշրջանային մակարդակ)
		Դրական անտեսվող (ազգային մակարդակ)	Դրական ցածր (ազգային մակարդակ)
	Ազդեցություն ազգային և համայնքային բյուջեների վրա Ծրագրին առնչվող հարկային և այլ վճարումներից	Դրական անտեսվող (ազգային մակարդակ)	Դրական անտեսվող (ազգային մակարդակ)
		Դրական ցածր (համայնքի մակարդակ)	Դրական չափավոր (համայնքի մակարդակ)
Չբաղվածություն և աշխատաշուկա	Ծրագրով պայմանավորված աշխատատեղերի ստեղծման ազդեցությունը զբաղվածության և աշխատաշուկայի վրա	Դրական անտեսվող (ազգային մակարդակ)	Դրական անտեսվող (ազգային մակարդակ)
		Դրական ցածր (տարածաշրջանի մակարդակ)	Դրական ցածր (տարածաշրջանի մակարդակ)
		Դրական չափավոր (համայնքի և տեղական մակարդակ)	Դրական բարձր (համայնքի և տեղական մակարդակ)
Հող, հողի հետ կապված ապրելակերպ և բնական	Գյուղատնտեսական նշանակության հողերի մշտական և ժամանակավոր օտարում	Բացասական բարձր	Բացասական ցածրից չափավոր

Հարաչափը	Հնարավոր ազդեցությունը	Նշանակելիության գնահատականը (մինչ մեղմացումը / բարելավումը)	Մնացորդային նշանակելիության գնահատականը (մեղմացումից / բարելավումից հետո)
ռեսուրսների օգտագործում	Բնական ռեսուրսներին սահմանափակ հասանելիություն	Բացասական անտեսվող	Բացասական անտեսվող
Կոմունալ ծառայություններ և տրանսպորտային ենթակառուցվածք	Շինարարական աշխատուժի ազդեցությունը տեղական բժշկական հաստատությունների վրա	Բացասական չափավոր	Բացասական ցածր
	Ծրագրի երթևեկության ազդեցությունը առկա ճանապարհային ենթակառուցվածքի վրա	Բացասական չափավոր	Բացասական անտեսվող
	Ազդեցություններ տեղական էլեկտրամատակարարման և թափոնների կառավարման կառույցների վրա	Բացասական ցածր	Բացասական անտեսվող
	Ազդեցություններ նոր ճանապարհների հետ հատվող ենթակառուցվածքի վրա	Բացասական չափավոր	Բացասական անտեսվող
	Ազդեցություններ ծրագրի երկայնքով սոցիալական ենթակառուցվածքի, մուտքի ճանապարհների ու Ծրագրի մեքենաների կողմից	Բացասական չափավոր	Բացասական ցածրից անտեսվող
Հանրային առողջություն և անվտանգություն	Ճանապարհատրանսպորտային պատահարներ՝ կապված Ծրագրի տրանսպորտային միջոցների հետ	Բացասական չափավոր	Բացասական ցածր
	Ազդեցություններ Ծրագրին առնչվող մեքենաների՝ ճանապարհների հարևանությամբ ապրող բնակիչների առողջության վրա՝ պայմանավորված աղմուկով և փոշիով	Բացասական ցածր (ոչ զգայուն կլանիչ) Բացասական չափավոր	Բացասական ցածր
	Ծրագրի աշխատողների հոսքի պատճառով տեղական համայնքներում վարակիչ հիվանդությունների աճ	Բացասական չափավոր	Բացասական ցածր
	Ծրագրի անվտանգության դրույթների ազդեցությունները	Բացասական ցածր	Բացասական անտեսվող
Աշխատանքի անվտանգություն և առողջություն	Արտակարգ իրավիճակներ (օրինակ՝ հրդեհներ, վտանգավոր նյութերի արտահոսքեր, արտակարգ իրավիճակներ, անբարենպաստ եղանակային և սեյսմիկ ռիսկեր)	Բացասական չափավոր	Բացասական ցածր

Հարաչափը	Հնարավոր ազդեցությունը	Նշանակելիության գնահատականը (մինչ մեղմացումը / բարելավումը)	Մնացորդային նշանակելիության գնահատականը (մեղմացումից / բարելավումից հետո)
	Տրանսպորտային միջոցների բախումներ, օրինակ. շինհրապարակներում, շինանյութերի/աշխատողների տեղափոխման ժամանակ կամ ճամբարներում	Բացասական չափավոր	Բացասական ցածր
	Բարձր աղմուկով պայմանավորված աշխատողների առողջության ռիսկեր	Բացասական չափավոր	Բացասական ցածր
	Վտանգավոր աշխատանքների ազդեցությունը աշխատողների անվտագության վրա	Բացասական չափավոր	Բացասական ցածր
	Աշխատողների էլեկտրական հարված ստանալու վանգը	Բացասական չափավոր	Բացասական ցածր
	Մթնոլորտային արտանետումների բարձր կոնցենտրացիաների ազդեցությունը աշխատողների վրա	Բացասական բարձր	Բացասական ցածր
	Աշխատող միգրանտների համար կլիմայի և տեղանքի փոփոխություններից ռիսկեր (օրինակ՝ տեղանքի մակարդակը ծովի մակերևույթից)	Բացասական ցածր	Բացասական անտեսվող
	Այլ վայրերից աշխատողների հոսքի պատճառով վարակիչ հիվանդությունների աճ	Բացասական չափավոր	Բացասական ցածր
Գեոդերային հարցեր	Կանանց զբաղվածության հնարավորությունները	Դրական ցածր (համայնքի և տեղական մակարդակ)	Դրական ցածրից չափավոր (համայնքի և տեղական մակարդակ)
		Դրական անտեսվող (տարածաշրջանի մակարդակ)	Դրական անտեսվող (տարածաշրջանի մակարդակ)
	Կանանց ձեռնարկատիրության հնարավորությունները	Դրական ցածր	Դրական ցածր (հնարավոր անցում դեպի չափավոր միջնաժամկետ կտրվածքում)
	Գեոդերային հիմքով բռնություն և ոտնձգություն դեպքերի աճ	Բացասական ցածր	Բացասական ցածրից անտեսվող
Անշարժ Մշակութային Ժառանգություն (ՄԺ)	Մշակութային ժառանգության ռեսուրսների ոչնչացում կամ վնասում	Բացասական ցածր - բարձր (կախված ՄԺ զգայունության մեծությունից և ազդեցության ուժգնությունից)	Բացասական ցածր
<b>Սոցիալական ազդեցություններ (Շահագործման փուլ)</b>			

Հարաչափը	Հնարավոր ազդեցությունը	Նշանակելիության գնահատականը (մինչ մեղմացումը / բարելավումը)	Մնացորդային նշանակելիության գնահատականը (մեղմացումից / բարելավումից հետո)
Տնտեսություն	Ազդեցություններ տարածաշրջանի և համայնքի մակարդակով տնտեսական զարգացման վրա	Դրական ցածր (տարածաշրջանի մակարդակ)	Դրական ցածր (տարածաշրջանի մակարդակ)
		Դրական չափավոր (համայնքի մակարդակ)	Դրական չափավոր (համայնքի մակարդակ)
	Ծրագրին առնչվող ապրանքների և ծառայությունների գնումների ազդեցությունը համապատասխան ապրանքների/ծառայությունների շուկաների վրա	Դրական անտեսվող (տարածաշրջանի մակարդակ)	Դրական անտեսվող (տարածաշրջանի մակարդակ)
		Դրական ցածր (համայնքի մակարդակ)	Դրական ցածր (համայնքի մակարդակ)
	Ազդեցություն ազգային և համայնքային բյուջեների վրա Ծրագրին առնչվող հարկային և այլ վճարումներից	Դրական անտեսվող (ազգային մակարդակ)	Դրական անտեսվող (ազգային մակարդակ)
		Դրական ցածր (համայնքի մակարդակ)	Դրական ցածր (համայնքի մակարդակ)
Զբաղվածություն և աշխատաշուկա	Ծրագրով պայմանավորված աշխատատեղերի ստեղծման ազդեցությունը զբաղվածության և աշխատաշուկայի վրա	Անտեսվող (ազգային և տարածաշրջանի մակարդակ)	Անտեսվող (ազգային և տարածաշրջանի մակարդակ)
		Չափավոր (համայնքի և տեղական մակարդակ)	Չափավոր (համայնքի և տեղական մակարդակ)
Կոմունալ ծառայություններ և տրանսպորտային ենթակառուցվածք	Ծրագրի շարժական հոսքի ազդեցությունը առկա ճանապարհային ենթակառուցվածքի վրա	Դրական ցածր (տարածաշրջանի մակարդակ)	Դրական ցածր (տարածաշրջանի մակարդակ)
		Դրական չափավոր (համայնքի մակարդակ)	Դրական չափավոր (համայնքի մակարդակ)
		Դրական բարձր (տաղական մակարդակ)	Դրական բարձր (տաղական մակարդակ)
	Ազդեցություններ տեղական էլեկտրամատակարարման և թափոնների կառավարման կառույցների վրա	Բացասական անտեսվող	Բացասական անտեսվող
Ազդեցություններ տեղական սոցիալական ենթակառուցվածքի վրա	Բացասական անտեսվող	Բացասական անտեսվող	
Հանրային առողջություն և անվտանգություն	Ազդեցություններ ճանապարհային անվտանգության վրա	Դրական չափավոր	Դրական չափավոր
	Ծրագրի ազդեցության գոտում գտնվող բնակավայրերի բնակիչների մասնակցությամբ	Բացասական չափավոր	Բացասական ցածր



Հարաչափը	Հնարավոր ազդեցությունը	Նշանակելիության գնահատականը (մինչ մեղմացումը / բարելավումը)	Մնացորդային նշանակելիության գնահատականը (մեղմացումից / բարելավումից հետո)
	ճանապարհատրանսպորտային պատահարների ռիսկը		
	Արտակարգ իրավիճակներ (ճանապարհի վնասման, տրանսպորտային միջոցների խափանումների կամ ճանապարհներից օգտվողների ոչ անվտանգ վարքագծի պատճառով)	Բացասական չափավոր	Բացասական ցածր
Աշխատանքի անվտանգություն և առողջություն	Արտակարգ իրավիճակներ (առաջացած եղանակային անբարենպաստ պայմանների/ գեոլոգիայի կամ աշխատողների ոչ անվտանգ պահվածքի հետևանքով)	Բացասական չափավոր	Բացասական ցածր
	ճանապարհատրանսպորտային պատահարների ռիսկերը (օրինակ՝ տեխնիկական սպասարկման աշխատանքների կազմակերպման կամ վարորդի վատ վարքագծի պատճառով)	Բացասական չափավոր	Բացասական ցածր
Գեներային հարցեր	Կանանց զբաղվածության հնարավորությունները	Դրական անտեսվող (տարածաշրջանի մակարդակ)	Դրական անտեսվող (տարածաշրջանի մակարդակ)
		Դրական ցածր (համայնքի և տեղական մակարդակ)	Դրական չափավոր (համայնքի և տեղական մակարդակ)
		Դրական չափավոր (խոցելի SS-ից կանայք)	Դրական չափավոր (խոցելի SS-ից կանայք)
	Կանանց զբաղվածության հնարավորությունները	Դրական ցածր	Դրական ցածր
Անշարժ մշակութային ժառանգություն	Վնաս մշակութային ժառանգության ռեսուրսներին ճանապարհի սպասարկման աշխատանքների ընթացքում կամ երթևեկության հետևանքով առաջացած թրթռումներից	Բացասական ցածրից չափավոր (կախված ՄԺ զգայունության մեծությունից և ազդեցության ուժգնությունից)	Բացասական անտեսվող
Ոչ կյուբական մշակութային ժառանգություն	Ավանդույթների, սովորույթների և ծեսերի վերածնունդ՝ տարածաշրջանի բարելավված հասանելիության շնորհիվ	Դրական ցածրից (կարճաժամկետ) չափավոր (երկարաժամկետ)	Դրական ցածրից (կարճաժամկետ) չափավոր (երկարաժամկետ)

Հետևյալ անցյալ, ընթացիկ և պլանավորված նախագծերը ներառվել և գնահատվել են Ծրագրի համար մշակված գումարային ազդեցության գնահատման մեջ՝

- Ծրագրի կարիքների համար լրացուցիչ էլեկտրահաղորդման գծերի կառուցումը,

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Քաջարան-Ագարակ հատվածը,
- Ողջի և Փխրուտ պոչամբարների վերականգնումը/ռեկուլտիվացումը,
- «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի տեխնիկական ջրամատակարարման համակարգի կառուցումը:

Գումարային ազդեցության գնահատման արդյունքները ամփոփված են ստորև՝

**Աղյուսակ 4. Գումարային ազդեցության գնահատման ամփոփումը<sup>8</sup>**

Հարաչափը	Գումարային ազդեցությունը	Նշանակելիության գնահատականը
Հանրային առողջություն և անվտանգություն	Օդի արտանետումների և աղմուկի հետևանքով առաջացած ռիսկեր հանրային առողջության համար՝ կանխատեսվում են Գեղիի տարածքում, Լեռնաձորի արևմտյան տարածքի փոքր հատվածում և այն երթուղիների երկայնքով գտնվող բնակավայրերում, որոնցով շարժվելու է շինարարական տեխնիկան, այդ թվում նաև այլ գործունեությունների իրագործումից:	Բացասական անտեսվողից չափավոր
	Ազդեցություններ Ծրագրի շինարարության ընթացքում ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով հասարակական անվտանգության, ինչպես նաև երթուղիների վրա, որոնցով շարժվելու է շինարարական տեխնիկան, այդ թվում այլ հարակից գործունեությունների իրականացումից:	Բացասական անտեսվողից չափավոր
Կոմունալ ծառայություններ և ենթակառուցվածք	Ազդեցություն մարզային առողջապահական հաստատությունների վրա	Բացասական չափավոր
Ճանապարհից օգտվողներ	Ավելի լավ տարածաշրջանային կապ և ճանապարհային անվտանգություն ճանապարհներից օգտվողների համար	Դրական բարձր
Աշխատանքի անվտանգություն և առողջություն	Գեղիի տարածքում աշխատողների օդի աղտոտվածության և աղմուկի բարձր մակարդակից ազդեցությունը՝ երկու միաժամանակյա իրականացվող գործունեություններից	Բացասական ցածրից չափավոր
	Ճանապարհատրանսպորտային պատահարներ միաժամանակ իրականացվող գործունեություններում ներառված աշխատուժի մասնակցությամբ:	Բացասական ցածր
Կենսաբազմազանություն	Ազդեցություններ կրիտիկական կենսաբազմազանության / առաջնահերթ կենսաբազմազանության առանձնահատկությունների և դրանցից դուրս գտնվող տեսակների և կենսավայրերի վրա	Բացասական անտեսվող
	Ազդեցություններ պահպանվող տարածքների, Emerald ցանցի և ԿԿՏ-երի վրա:	Բացասական անտեսվող (Մերի ԿԿՏ-ի համար)
Հողօգտագործում	Կանխատեսվում են գումարային ազդեցություններ հողօգտագործման և գյուղատնտեսական գործունեության վրա Գեղիի և Լեռնաձորի տարածքներում և պոտենցիալ նոր էլեկտրահաղորդման գծերի բուֆերային գոտիներում	Բացասական անտեսվողից չափավոր

<sup>8</sup>Այնտեղ, որտեղ կան բազմաթիվ գնահատականներ տարբեր ազդեցության չափերի վերաբերյալ, օգտագործվում է ամենաբարձր նշանակելիության գնահատման գույնը

Հարաչափը	Գումարային ազդեցությունը	Նշանակելիության գնահատականը
Հողի որակ	Կանխատեսվում են գումարային ազդեցություններ հողօգտագործման և գյուղատնտեսական գործունեության վրա Գեղիի և Լեռնաձորի տարածքներում և հնարավոր է էլեկտրահաղորդման գծերի երթուղիների երկայնքով	Բացասական անտեսվողից չափավոր
Լանդշաֆտ	Լանդշաֆտների վրա գումարային ազդեցությունները կանխատեսվում են էլեկտրահաղորդման գծերի և Ծրագրի համար	Բացասական չափավոր
Նյութական մշակութային ժառանգություն	Մշակութային ժառանգության ռեսուրսների ոչնչացում կամ վնասում	Բացասական ցածր
Ոչ նյութական մշակութային ժառանգություն	Տեղական ավանդույթների, սովորույթների և ծեսերի պահպանում ՓՄՁ-ների և տարածաշրջանում զբոսաշրջային գործունեության շնորհիվ՝ ներգրավված ճանապարհային կապի հուսալի հնարավորություններով	Դրական ցածրից չափավոր
Չբաղվածություն և աշխատաշուկա	Ծրագրի շինարարության և շահագործման շնորհիվ զբաղվածության հնարավորությունների ստեղծում	Դրական չափավոր
Տնտեսություն (Տարածաշրջանային և համայնքային)	Ազդեցություններ հարկերի վրա, որոնք պետք է վճարվեն պետական բյուջեներ, գնումների հնարավորություններ և ՓՄՁ զարգացման, ներառյալ կանանց հնարավորություններ:	Դրական ցածրից չափավոր

## 5 ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ավարտված ազդեցության գնահատումը ցույց է տվել, որ Ծրագրի հնարավոր դրական ազդեցությունները հիմնականում կապված են հանրային անվտանգության և սոցիալ-տնտեսական օգուտների հետ: Կարևոր է, որ Ծրագիրն առաջին անգամ ուղիղ կապ կստեղծի Սիսիանի և Քաջարանի միջև՝ այդպիսով նվազեցնելով վատ կապակցված շրջանների միջև ճանապարհորդության ժամանակը: Այն նաև կնպաստի ճանապարհային անվտանգության և հուսալիության բարելավմանը, ինչպես նաև տեղական կապի բարձրացմանը/հեռավոր տարածքներում հասանելիության բարելավմանը: Դրական ազդեցություններ են ակնկալվում տնտեսության (ներառյալ ապրանքների և ծառայությունների գնումները և հարկային եկամուտները) և զբաղվածության և աշխատաշուկաների վրա ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման ընթացքում, ինչը կհանգեցնի ապագա զարգացման հնարավորություններին մարզերում և տեղական մակարդակում: Ծրագիրը նաև նախատեսվում է ստեղծել զբաղվածության և ձեռներեցության հնարավորություններ կանանց համար և նպաստել տեղական ավանդույթների, ծեսերի և սովորույթների աստիճանական վերածնմանը, այդպիսով աջակցելով տարածքում ոչ նյութական մշակութային ժառանգության ներուժին և երկարաժամկետ հեռանկարում զբոսաշրջության զարգացմանը:

Ծրագրի պոտենցիալ բացասական ազդեցությունները կապված են շինարարական աշխատանքների հետ, որոնք հանգեցնում են օդի արտանետումների/փոշու, աղմուկի, թրթռումների, երթևեկության և մուտքի փոփոխությունների, որոնք կարող են զգալ մոտակա համայնքները, հողերի զգալի ձեռքբերումը, մշակութային ժառանգությանը վնասելը, թափոնների առաջացումը, ազդեցություն կենսաբազմազանության, հողի և ջրային ռեսուրսների, աշխատանքի առողջության և անվտանգության, կոմունալ ծառայությունների, ճանապարհային ցանցի և տեղական լանդշաֆտների վերափոխման վրա: Այս հնարավոր ազդեցություններից շատերը կլինեն ժամանակավոր, և շինարարության փուլում կիրականացվեն համապատասխան մեղմացնող միջոցառումներ՝ դրանք նվազագույնի հասցնելու համար: ճանապարհի սպասարկումը կապված կլինի մասշտաբով և տևողությամբ շատ ավելի ցածր նմանատիպ

ազդեցությունների հետ: Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ որոշ պոտենցիալ ազդեցություններ կլինեն մշտական և, ինչպես մանրամասնված է ՇՄԱԳ-ի թեմատիկ հատորներում, ԲՍԿՊ-ում և ԲՍՄՊ-ում, կհանգեցնեն հատուկ մեղմացման և կառավարման միջոցառումների, ինչպիսիք են մշակութային ժառանգության միավորների տեղափոխումը, նախագծային փոփոխությունները՝ կենդանիների անցումներ/կանաչ կամուրջներ տեղակայելու համար, փոխհատուցում և ապրուստի միջոցների վերականգնում ազդեցության ենթարկված հողերի սեփականատերերի/օգտագործողների համար, և փոխհատուցում առանց զուտ կորուստների/զուտ շահույթի հասնելու կենսաբազմազանության առաջնահերթ հատկանիշների և կենսաբազմազանության կարևորագույն կենսամիջավայրերի առաջացման տեսակների ու միջավայրերի:

Ծրագրի համար մշակված գումարային ազդեցության գնահատումը չի նույնականացրել որևէ խոշոր բացասական գումարային ազդեցություն:

ՇՄԱԳ-ը նաև առաջարկել է մի քանի լրացուցիչ ուսումնասիրություններ և գնահատումներ, ինչպիսիք են երկրաբանական վտանգների 3D մոդելավորումը, կենսաբազմազանության շարունակական հետազոտությունները, կրկնվող աղմուկի և օդի ցրման մոդելավորումը հետագա շահագործման փուլի համար, երբ նոր երթևեկության ուսումնասիրության և կանխատեսումների արդյունքները հասանելի կլինեն: Ծրագրի համապատասխան կառավարման պլանները կվերանայվեն՝ արտացոլելու նոր ուսումնասիրություններն ու գնահատումները, և կիրականացվեն, ինչպես պարտավորվել է ՃԴ-ը:

Նախակառուցման, շինարարության և շահագործման հետ կապված բոլոր միջոցառումներն ու պարտավորությունները փաստաթղթավորված են ԲՍԿՊ-ում և թեմատիկ կառավարման պլաններում, ինչպիսիք են ԿՄՊ-ը, Տարաբնակեցման պլանը, Մշակութային ժառանգության կառավարման պլանը և այլն: Ազդեցությունները կարելի է նվազագույնի հասցնել և կառավարել մեղմացման և կառավարման միջոցառումների օգնությամբ, որոնք ՃԴ-ը մեկնաբանել է (տես ՇՄԱԳ-ի Յատոր 6-ը): Այսպիսով, ընդհանուր առաջարկությունն է արդյունավետ և ժամանակին իրականացնել ԲՍՄՊ-ում ներառված միջոցառումները, ինչպես նաև թեմատիկ և տեղամասային հատուկ ԲևՍ կառավարման պլաններում, պատշաճ ԲևՍ հսկողության և շարունակական մշտադիտարկման ներքո՝ բացասական ազդեցությունները մեղմելու և Ծրագրի օգուտները առավելագույնի հասցնելու համար:

## 6 ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարկատուների պահանջներին համապատասխան՝ Ծրագրի ԲևՍ արդյունավետությունը պետք է ենթարկվի շարունակական մշտադիտարկման Ծրագրի շինարարության և շահագործման փուլերի ընթացքում՝ ապահովելու համար ԲՍՄՊ-ի, ԲՍԿՊ-ի և ԲևՍ կառավարման այլ հատուկ պլանների, ինչպես նաև կիրառելի ազգային օրենսդրության պահանջների իրագործումը:

Շինարարության և շահագործման փուլերի ԲևՍ մշտադիտարկման պլանները կմշակվեն, կհամաձայնեցվեն Վարկատուների հետ և կիրականացվեն Շին. կապալառուի (շինարարության փուլում) և ՃԴ-ի (շահագործման փուլում) կողմից: Ինչպես դիտորդական, այնպես էլ գործիքային չափումները կիրականացվեն մշտադիտարկման պլանների համաձայն: Դրանց իրականացման համար կհատկացվեն համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ:

## 7 ՇԱՅԱՌՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

ՇՄԱԳ-ի մշակման ընթացքում իրականացվել է շահագրգիռ կողմերի ներգրավվածություն: Այն առաջնորդվել է նախնական Շահառուների ներգրավվածության Պլանով (ՇՆՊ),

որը պատրաստվել և հրապարակվել է որպես 2022 թվականի ապրիլին Նախնական գնահատման հաշվետվության<sup>9</sup> մաս՝ ստեղծելու դրական հարաբերություններ կառուցելու և պահպանելու շրջանակ, ինչպես նաև բաց և թափանցիկ երկկողմանի հաղորդակցություն ճՂ-ի և շահագրգիռ կողմերի միջև: ՇՄՍԱԳ գործընթացի ընթացքում՝ 2021 թվականի ապրիլից մինչև 2023 թվականի մայիսը, անցկացվել է շուրջ 200 ներգրավվածության միջոցառում: Մեծ մասը կազմակերպվել է ճՂ-ի և տարածաշրջանային, քաղաքային և տեղական իշխանությունների աջակցությամբ: Ներգրավումը համապատասխանում է Վարկատուների պահանջներին և միջազգային լավագույն գործելակերպերին: Նախնական ՇՆՊ-ը հետագայում թարմացվել է, ներառել ներգրավման աշխատանքները Ծրագրի շինարարության և շահագործման փուլերում և հրապարակվել ՇՄՍԱԳ հրապարակման փաթեթի շրջանակներում:

ՃՂ-ը պաշտոնապես ներդրել է արտաքին շահառուների համար Ծրագրի բողոքարկման մեխանիզմ<sup>10</sup>, որը համապատասխանում է ինչպես ազգային, այնպես էլ Վարկատուների պահանջներին: Բողոքների ներկայացման մեխանիզմը փոխանցվել է շահագրգիռ կողմերին հանրային քննարկումների ընթացքում և բաժանվել է Նախնական գնահատման ամփոփաթերթիկի և ավելի ուշ՝ նաև ՇՄՍԱԳ ամփոփաթերթիկի (ՇՄՍԱԳ խորհրդակցությունների համար) միջոցով: Շահառուները կարող են դիմել ճՂ ստորև բերված կոնտակտային տվյալներով (**Աղյուսակ 5**) և հասանելի է ճՂ-ի կայքում (<https://armroad.am/en/contacts> կամ <https://armroad.am/am/contacts>): Շին. կապալառուի և վերահսկող ճարտարագետի նշանակվելուց հետո նրանց կոնտակտային տվյալները կհրապարակվեն, ուստի հարցումներն ու բողոքները կարող են ուղղվել նաև իրենց: Հետագա փուլերում Ծրագրի հանրության հետ կապերի պատասխանատու կներգրավվի ճՂ-ի կողմից: Կոնտակտային տվյալները կփակցվեն Սիսիան և Քաջարան համայնքների և ազդակիր վարչական շրջանների, ինչպես նաև շինհրապարակների ցուցատախտակներին: Բոլոր հարցումներն ու բողոքները պետք է գրանցվեն, ուսումնասիրվեն և արձագանքվեն ՇՆՊ-ով սահմանված ընթացակարգի համաձայն:

**Աղյուսակ 5. ՃՂ-ի կոնտակտային տվյալներ, որոնցով կարելի է ներկայացնել Ծրագրին առնչվող հարցումներ և բողոքներ**

<p><b>Ծրագրի հետ կապված հարցումները և բողոքները</b> կարող են ուղարկվել հետևյալ հասցեով</p>	<p><b>Արթուր Սանոյան</b>                  ՀՀ ՃՄՆԾ տրանշ 2 և 4 Ծրագրի ղեկավար, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ (Հայաստան, ք. Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3)                  Էլ. հասցե՝ <a href="mailto:artur.sanoyan@armroad.am">artur.sanoyan@armroad.am</a>                  Աշխ. հեռ.՝ +374 10 51-13-91 (269), Բջջային՝ +374 95 111 537</p>
<p><b>Ընդհանուր հարցումների</b> դեպքում շահառուները կարող են դիմել ճՂ-ին՝ օգտագործելով նրա կայքի կոնտակտային տվյալները (<a href="https://armroad.am/en/contacts">https://armroad.am/en/contacts</a>)</p>	<p>«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ (Հայաստան, ք. Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3)                  Աշխ. հեռ.՝ +374 10 51-13-91                  Էլ. հասցե՝ <a href="mailto:info@armroad.am">info@armroad.am</a></p>

**Նախագծվող ճանապարհի երկայնքով գյուղերի բնակիչներն իրենց հարցումներն ու բողոքները կարող են ներկայացնել նաև իրենց գյուղի ղեկավարներին:** Տեղական իշխանություններին (գյուղերի կամ համայնքների ղեկավարներին) հաղորդված ցանկացած հարցում կամ մտահոգություն անմիջապես կփոխանցվի ճՂ՝ քննարկման և լուծման համար:

<sup>9</sup>[https://armroad.am/en/news/inner/News\\_25.04.2022](https://armroad.am/en/news/inner/News_25.04.2022)

<sup>10</sup>Առանձին մեխանիզմ է մշակվել աշխատողների բողոքները լուծելու համար